



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3101

Օ. Երայե Եր

Ա. Երայե Եր

82

Շ-98

Բաւեր 1904թ.

ՉՆՈՒՐ ԵՄ ՀՐՅԱԿԱՆ ՏՈՒՆՐԻ ԳՏԻՉԻ

**Ս. ՄԵՍՐՈՒԻ**

**ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

ՀՐԱՏԱՐԱԿԻ 2

Օ. ՇՐԷՅՆԵՐ

# ԱՆՈՒՐՋՆԵՐ

ԹԱՐԻՉ

Ատրպատականի Հայերի Թէմական արագատիպ  
Վաղամեռիկ Եղիաբէք Միրզաբէկեանի Յիշատակից

1904

1002  
5643



ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ (ԹԱԻՐԻ-  
 ԶՈՒՄ) ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ Է

1. Լ. Տօրսօյի Մարդիկ ի՞նչի են հարբում  
 Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 դռ.
2. » » Կարմա-հուղղալական պատմածք  
 Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. Օտար փոռնիքեր Ա. Հիւսք. Ըրշեհիք  
 Թարգ. Մ. Վ. Մազսուզեանի 1 դռ.
4. Կ. Կառլցկի Կոչոնիական Քաղաքականութ.  
 Թարգ. Ռ. Խանազատեանի 2 դռ.
5. Ռ. Խանազատ Իդեալիզմ թե Մատերիալիզմ  
 Ուսումնասիրութիւն 10 շհ.
6. Ա. Երայասականի Հայոց Հիմնական և Հայաս-  
 տանեայց եկեղեցու ծիսական կանոնա-  
 դրութիւն - 2 դռ.
7. Գրիգոր Երզնկեացիի Երգիծական գրոյցներ Ա. Տ-Տ.  
 1904 թ. գինն է-3 դռ. կամ 50 կպ.
8. Անուրջներ Օ. Շրէյների Թարգ. Ռ. Ն. և Տ. Տ.  
 1904 թ. գինն է-15 շահի. կամ 15 կպ.

Գրիգոր TAURIS A L' IMPRIMERIE DU  
 DIOCÈSE ARMÉNIEN

82  
 98

№ 2988  
 Օ. ՇՐԷՅՆԵՐ



# ԱՆՈՒՐՋՆԵՐ

ՀԵՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՏՐՊԵՍ

5645

Ներքում եմ գրոյցներս պատկ  
 աղջկանս, որ Տիրոջ շնորհի պի-  
 տի զարգանա, մինչև որ կատա-  
 րելապէս ըմբռնէ այն, ինչոր  
 ներկայիս դեռ շօշափելի չէ մեզ  
 համար եւ ներկայանում է մեզ  
 անուրջների ու երեսակայութիւն-  
 ների սէջ:

Օ ՇՐԷՅՆԵՐ



Անուրջներու հիմնական տպագրութիւն  
 Յիսուսակ վարդապետի Երզնկայի Երզնկայեցի Երկրային Երկրային

1904

15.07.2013

3101

MOOS VON S.

Ա Ր Տ Ա Տ Պ Ա Մ Է



„Տարազ „ Հանդիսի № 37—38, 1897.



# ԱՆՈՒՐՋՆԵՐ

I

## ՈՐՍՈՐԳ

Հովտում մի որսորդ էր ապրում: Ամէն օր անտառը նա որսի էր գնում: Մի անգամ պատահեց, որ նա հասաւ մի մեծ լճի եզերք: Մինչ նա եղեգնուաի մէջ կանգնած՝ թռչնի մօտենալուն էր սպասում, նրա վրա մի մեծ շուք ընկաւ և նա շրի մէջ գրա արտացոլումը տեսաւ: Նայեց երկնքին, բայց տեսիլը չբացել էր: Այդ ժամանակ նրան բունն փափագ տիրեց կրկին անգամ տեսնելու շրի մէջ այդ արտացոլումը, և նա սկսեց հսկել ու, անբողջ օրը սպասեց. բայց գիշերը վերահասաւ, իսկ արտացոլումը այլևս չերևաց: Նա տուն վերադարձաւ սոսորակը դարտակ, տիրուր և լուռ: Բնկերները սկսեցին հետաքրքրել,

թէ ինչ է այդ տարութեան պատճառը, բայց նա չէր պատասխանում նրանց և միայնակ նստել ու իր վշտի հետ էր ընկել: Յետո նրա մօտ եկաւ իր մի բարեկամը և որսորդը նրան ասաց.

— Դեռ երբէք չտեսածս, ես այսօր տեսա, — մի մեծ սպիտակ թռչուն. որ իր արծաթափայլ թևերով սաւառնում էր անհուն կապուտակ երկնքի վրա: Եւ ես զգում եմ թէ ինչպէս մի մեծ բոց լափում է կուրծքըս: Դա վայրկենական տեսիլք էր, մի արագացումն էր ջրի մէջ, բայց ես հիմա աշխարհիս երեսին ուրիշ ոչինչ չեմ ուզում, միայն տիրանալ զրամս:

Նրա բարեկամը ծիծաղեց. — Դու արեգակի ճառագայթն է եղել, ջրի մէջ իտղալիս, կամ հէնց գլխիդ շուքն է եղել, ասաց նա, մինչև վաղը դու նրան կը մոռանաս:

Իայց անցաւ մի օր, անցաւ երկու-երեք օր, իսկ որսորդը միշտ թափառում էր միայնակ: Նա շարունակ փնտռում էր անտառներում ու դաշտերում, լճերի ու եղէգների մէջ, բայց իր փնտռածը չէր գտնում: Նա այլևս որս չէր անում և դա նրա ինչին էր հարկաւոր:

«Ինչ է պատահել նրան», ասում էին նրա ընկերները: «Նա իսկազարել է», ասաց նրանցից մէկը: Ոչ: զբանցից էլ վատն է պատահել, ասեց միւսը, նա ուզում է տեսնել այն, ինչ որ մեզանից և ոչ սր չէ տեսել երբէք. նա հրաշք է ցանկանում»: «Գնանք, թողնենք նրան», ասեցին բոլորը: Եւ որսորդը մնաց միայնակ:

Մի անգամ, երբ գիշերային խաւարի մէջ թափառում էր, ցաւատանջ սրտով ու լացով, նա իր առաջ մի

պառաւ տեսաւ: Այդ կինը մահկանացուներից թէ աւելի մեծ և թէ աւելի բարձր էր:

— Ո՞վ ես դու, հարցրեց նորան որսորդը:

— Ես Իմաստարիւնն եմ, — պատասխանեց պառաւը, բայց ոմանք ինձ Գիւտարիւն են անւանում: Ես իմ ամբողջ կեանքս այս հովիտներումն եմ անցկացրել, բայց ոչ մի մահկանացու ինձ չէ կարող տեսնել վիշա ու տառտաւանք կրելուց առաջ. միայն արտասուքով թրջւած աչքերը կարող են ինձ տեսնել և ես միայն տառապելաներին եմ օրհնում:

Եւ որսորդը բացականչեց. — Ո՞վ ե՞ս դու, որ այսքան ժամանակ այստեղ պարել ես. ասա ինձ, ի՞նչպէս է այն ահագին ու հրաշալի թռչունի անունը, որ ես տեսա երկնակամարի տակ սաւառնելիս: Ինձ ուզում են հաւատացնել, թէ դա երազ է եղել, թէ ես իմ գլխի շուքն եմ տեսել:

Գլուաւը ժպտաց:

— Նրա անունը ձգարարիւն է: Ով որ նրան մի անգամ տեսել է, այլ ես երբէք հանգստութիւն չէ ունեցել: Մինչև իր մահը միշտ նրան է փափագել:

Որսորդը բացականչեց. — Օհ, ասա ինձ, որտեղ կարող եմ նրան գտնել:

Իսկ իմաստութիւնն ասաց. — Դու դեռ բաւականաչափ տառապանք չես կրել — և նա անհետացաւ:

Այդ ժամանակ որսորդը կրծքից հանեց իր երեւակայութեան մակուկը և սկսեց նրա վրա փաթաթել իր ցանկութիւնների թելը. ամբողջ դիշերը նա նստած էր և ցանց էր հիւսում: Առաւօտեան նա գետնի վրա փսեց

ուկեա ցանցը և նրա մէջ թերահաստութեան մի բանի հատիկներ գցեց, որոնց թողել էր իր հայրը և որոնց նա միշտ զըպանում էր պահում: Այդ հատիկները սպիտակ սուեկերի էին նսանում և, նրանց վրա ոտ կտրելիս, նրանցից մոխրագոյն փոշի էր ցայտում: Որսորդը նստեց ցանցի մօտ ու սկսեց դիտել: Ամէնից սուսջ ցանցի մէջ ձիւնի նման սպիտակ թռչուն ընկաւ կապուտակ աչքերով և զիւր ձայնով: Այդ թռչունը երգում էր. «Ճմարտութիւնը երկնքումն է, Ճմարտութիւնը երկնքումն է»:

Յետո մի սև միտախրական թռչուն ընկաւ ցանցի մէջ, մուգ գեղեցիկ աչիկներով, որոնք մարգուս հոգու լեռքերն էին թափանցում: Նա միշտ միևնոյն բանն էր երգում, «Անմահութիւն»:

Որսորդը նրանց երկուսին էլ մի ձեռքի վրա առաւ, ինքն իրան մտածելով. սնուշտ սրանք երկուան էլ Ճմարտութեան հրաշալի ընտանիքին են պատկանում:

Դրանցից յետո մի թռչուն էլի թռաւ եկաւ, լանաշ ու ոսկեգոյն փետուրներով և սուր ձայնով սկսեց երգել, մահից յիտո գալիք վարձատրութեան մասին:

Եւ որսորդը ասեց. — Դու այնպէս լաւ չես, ինչպէս պուշինն է, բայց այնուամենայնիւ դու էլ լաւն ես, ու նրան էլ իր մօտ վերցրեց:

Յետո ուրիշ գոյնգոյն ուրախ, երգող թռչուններ էլ եկան և այնքան կոցահարեցին, մինչև որ այլևս հատիկները չմնացին: Այդ ժամանակ որսորդը իր բոլոր թռչուններին հուաքեց, մի ամուր երկաթէ վանդակ շինեց ու նրանց այդ վանդակի մէջ դրեց: Եւ ամէն կողմից ժողովուրդը սկսեց հաւաքել երգերով ու պարերով և

վանդակը տեսնելով սկսեցին կանչել. — Ա՛յ, բախտաւոր որսորդ, հրաշալի մարդ, ի՞նչ սիրուն թռչուններ են, ի՞նչ զմայլելի երգեր են:

Բայց ոչ ոք չէր հարցնում, ո՞րտեղից են այդ թռչունները և կամ ինչպէս է բռնել: Նրանք միայն երգում ու պարում էին թռչունների շուրջը: Որսորդն էլ ուրախ էր, որովհետև ինքն իրան մտածում էր. — Ի հարկէ. Ճմարտութիւնն էլ զբանց մէջն է լինելու: Ժամանակով թռչունների փետուրները կթափեն և ես նրանց ձիւնանման կերպարանքը կտեսնեմ»:

Սակայն ժամանակն անցնում էր, ժողովուրդը շարունակ պարում և երգում էր. իսկ որսորդի սիրտը գնալով աւելի ու աւելի տխրում ու ծանրանում էր: Դարձեալ նա սկսեց առանձնանալ ու խորին տխրութեան մէջ ընկնել. և սոսկալի ծարար վերստին արթնացաւ նրա սրտի մէջ: Մի անգամ, երբ նա միայնակ էր և լալիս էր այնպէս եղաւ, որ նա դարձեալ պատահեց Իմաստութեան: Նա պատմեց նորան, թէ ի՞նչ էր արել ինքը: Իսկ Իմաստութիւնը տխուր կերպով ժպտաց.

— Զատ մարդիկ են, ասաց նա, ցանցեր դրել Ճմարտութիւնը բռնելու համար, բայց նրանցից և ոչ մէկը չէ կարողացել նրան բռնել: Ճմարտութիւնը չէ կարող այդ ցանցի մէջ ընկնել, նա չէ կարող այս հովիտների օդը շնչել: Եւ որսորդը դառնութեամբ բացականչեց.

«Ուրեմն՝ ես այստեղ այնչափ պիտի նստեմ, մինչև որ այս սոսկալի բոցը իսպառ ինձ լափի՛»:

Իմաստութիւնը պատասխանեց.

— Լսիր, քեզ ասեմ, որովհետև դու բաւական տան-

Ղեկ ու տառապել եւ. ով որ Արդարութիւնը գտնելու յետեից է ընկնում, պէտք է այս սնապաշտութեան հովիտը թողնի ընդ միշտ, թողնելով նրա մէջ այն բոլորը, ինչ որ նրան էր պատկանում: Եւ միայնակ, առանց այտակից մի հնչին բան անգամ իր հետ վերցնելու, նա պէտք է անցի կատարեալ անձնուրացութեան աշխարհը, որտեղ ամէն բանից հրաժարոււմ են, պէտք է մնա այնտեղ և մարանչի փորձութիւնների դէմ, իսկ երբ լոյսի առաջին ճառագայթները կերևան, նա պէտք է վեր կենա և հետևի նրանց ու գնա արեգակի շոր ու անապատ երկիրը: Այնտեղ նրա յանդիման դառն իրականութեան լեռները կը բարձրանան. նա պէտք է վեր բարձրանա այդ լեռների գագաթը. ձմարտութիւնը նրանց յետևումն է բնակուում:

— Եւ նա կարող է նրան հասնել: Կարող է նրան բռնել ձեռքերով, գոչեց որսորդը:

Իմաստութիւնը շարժեց իր գլուխը:

— Եւ չէ կարող երբէք նրան տեսնել: Եւ չէ կարող երբէք ձեռքերով նրան բռնել: Ժամանակը դեռ չէ հասել:

— Կընշանակէ յոյս չկա՞ գոչեց որսորդը:

— Լսիր, ասաց Իմաստութիւնը, Մի քանիսը արդէն փորձել են այս լեռների գագաթը բարձրանալ. մերկ ժայռերի վրայով աստիճաններ շինելով նրանք բարձրացել են և այդ բարձրութիւնների վերը հասնելով, նրանց երբեմն պատահել է սպիտակ արծաթափայլ փետուր գտնել, որ ձմարտութեան թեւերից է ընկած եղել: Եւ էարող է պատահել, ասաց պառուր վեր կենալով և մարգարէական եղանակով մատով դէպի երկինքը ցոյց տա-

լով, կարող է պատահել, որ երբ մարդկային ձեռքերով այդ արծաթափայլ փետուրներից բառականաչափ հաւաքւած կլինեն նրանցից մի պարան կհիւսւի, իսկ այդ պարանից էլ մի մեծ ցանց, այդ ցանցով կարելի կլինի ձմարտութիւնը բռնել: Միմիայն ճշմարտութիւնով կարելի է ձմարտութիւնը բռնել:

Որսորդը վեր կացաւ:— Ես կգնամ, ասաց նա:

Քայց Իմաստութիւնը կանգնեցրեց նրան:

— Մի մտռոնալ, ատայ նա, ով որ այս հովիտը մի անգամ թողնում է, այլևս երբէք չէ վերադառնում: Թէկուր նա եօթն օր ու եօթը գիշեր էլ լայ լինի արիւնարտասունքով, նա չէ կարող այլևս սահմանն անցնել: Այս սահմանից մի անգամ դուրս եկողին այլևս վերադարձ չկա: Այն ճանապարհի վրա որ դու ես ուղղւում օտք դնել, վարձատրութիւն մի սպասիր: Ով այս ճանապարհով գնում է, նա գնում է իր ազատ կամքովը, յանուն այն բարձր սիրտ, որ նրա հոգին է լեցնում: Նրա վարձատրութիւնը— նրա աշխատանքի մէջ է:

— Կգնամ- ասաց որսորդը, միայն դու ինձ ասն երբ լեռներին հասնեմ ի՞նչ շաւիղով գնամ:

— Ես դարեւրով կիտուած Գիտութեան աղջիկն եմ, ասաց պառուր: Ես կարող եմ անցնել միայն այն տեղով, որտեղից արդէն շատերն են անցել: Միայն շատ քչերն են այդ բարձրութիւնների գագաթին հասել, և նրանցից ամէն մէկը ինքն է իր համար ճանապարհ բաց արել: Այնտեղ գնացողը մահն իր աչքին է առնում. նա այլևս չէ լսում իմ ձայնը: Ես կարող եմ միայն նրան հետևել, իսկ առջևից գնալ ես չեմ կարող:

Եւ Իմաստութիւնն անհետացաւ: Իսկ որսորդը շուռ  
եկաւ, դնաց վանդակի մօտ և իր ձեռքերով կտա-  
րատեց նրա երկաթէ թելերը, և կտարաած երկաթը սաս-  
տիկ վիրաւորեց նրա ձեռքք: Կառուցանելը երբեմն աւելի  
հեշտ է, քան խորատակելը:

Յետո՞ւ նա սկսեց իր բոլոր թռչուններին մէկը սիւ-  
սի հետեւից հանել, և թողեց նրանց ազատ թռչելու:  
Քայց երբ հերթը հասաւ խորհրդաւոր մութ գոյնի թըռ-  
չունին, նա երկար ժամանակ նրան իր ձեռքումը բռնեց  
ու նայում էր նրա հրաշալի, կապուտակ աչքերին, և թըռ-  
չունի բերանից դուրս թռաւ իր գիլ ու խորհրդաւոր  
աղաղակը. «Անմահութիւն»: Եւ որսորդը ասաց արագու-  
թեամբ.— Ես չեմ կարող բաժնուել սրանից: Ես սրան կը-  
պահեմ և հետո կտանեմ: Եւ նա պահեց նրան իր կրք-  
ծրի վրայ ու ծածկեց իր հագուստովը:

Քայց փոքրիկ թռչունը գնալով աւելի ու աւելի  
ծանրանում էր, մինչև որ նա սկսեց կապարի նման որ-  
սորդի կուրծքը ճնշել: Նա չէր կարողանում թռչունի  
հետ միասին շարժուել, չէր կարողանում հովիտից դուրս  
գալ: Այդ ժամանակ նա կրկին անգամ հանեց թռչնին ու  
սկսեց նայել նրա վրա:— Ո՛հ, իմ սիրելի և քաղցրիկս,  
ասաց նա վշտահար եղանակով, մի՞թէ ես չեմ կարող  
բեղ հետո տանել: Նա տըրուլթեամբ բացեց իր ձեռքք:  
Թո՛ղի, ասաց նա, կարող է պատահել, որ ձշմարտու-  
թեան երգի մի օտը այնպէս կհնչի, ինչպէս որ քո սի-  
րելի ձայնն է, բայց ես երբէք չեմ լսիլ նրան:»

Տըրուլթեամբ նա բացեց իր ձեռքը, և թռչունը  
թռաւ, հեռացաւ նրանից ընդմիշտ: Յետո՞ւ նա հանեց իր

երեակայութեան մակուկը, վերցրեց նրա վրայից իր  
ցանկութիւնները թելը և գցեց նրան գետնի վրա. դա-  
տարկ մակուկը նա փահեց իր կրծքի վրա, որովհետեւ  
թելը նա շինել էր հովտում, իսկ մակուկը նա ստացել էր  
մի անյայտ աշխարհից: Եւ որսորդը արդէն պատրաստ  
էր գնալու, բայց ամբողջը նրան շրջապատեց ազաղակ-  
ներով.

— Յիմար, շո՛ւն, խելագա՛ր, աղաղակում էին  
նրանք, ինչպէս համարձակեցիր վանդակը կտարել,  
բոլոր թռչուններովդ ազատ արձակել:

Որսորդը մի ինչ որ բան ասաց, բայց նրան չէին  
ուզում լսել:

— Ձշմարտութիւն: Ինչ բան է ձշմարտութիւնը:  
Մի՞թէ կարող ես դու նրան ուտել, խմել: Ո՞վ է երբեքէ  
նրան տեսել: Քո թռչունները խելական, կենդանի թռ-  
չուններ էին: Ամէնքն էլ կարող էին նրանց երգը լսել:  
Ո՛հ, յիմար, գարշելի, աղաղակում էին նրանք, դու  
թիւնաւորում ես օդը:

— Ի՞նչ գործ ունենք նրա հետ, ասում էին միւս-  
ները, թո՛ղ անիւրբը գնա, ուր ուզում է: Եւ նրանք հե-  
ռանում էին նրանից: Քայց մնացածները սկսեցին բա-  
րել ու ցիխ հաւաքել ու նրա վրա շարեան: Եւ վերջա-  
պէս երբ որսորդը մի լաւ ծեծուած ու վիրաւորած էր,  
նա կամաց կամաց անտառը մտաւ: Գիշերային խաւարը  
իջաւ հովտի վրա, շուրթերը գնտլով աւելի ու աւելի թան-  
թանձրանում էին, իսկ որսորդը շարունակ առաջ էր գը-  
նում: Վերջապէս նա հասաւ այն երկրի սահմանին, որ-  
տեղ սիշտ գիշեր է լինում: Եւ նա անցաւ սահմանը ու

Թանձր խաւարը շրջապատեց նրան: Նա սկսեց խարխա-  
փելով ճանապարհ որոնել, բայց այն ճղնիւրը, որոնց նա  
ձեռք էր դիպցնում, փշուրում էին և փոշիով ծածկում էին  
գետինը: Իւրաքանչիւր քայլում նրա ոտները թաղում  
էին և նրա ոտների տակից մանր ու անշոշափելի փոշու-  
ածակեր էին բարձրանում ու նրա երեսին խփում: Որսորդը  
նստեց մի քարի վրա ու երեսը ծածկեց ձեռքերով, սպա-  
սելով մինչև որ այս խաւարի ու անձնւիրութեան երկրում  
լոյս բացւի: Նրա սիրտն էլ լքեցեց խաւարով:

Յետո ճահճի միջից, օջ ու ձախ կողմերից սկսեց  
սառը մառախուղ բարձրանալ և շորս կողմից որսորդին  
իր մէջն առաւ: Մանր ու անտեսանելի անձրև սկսեց տե-  
ղալ և նրա մազերի ու հագուստի վրա խոշոր կաթիլ-  
ներ սկսեցին հաւաքուել: Նրա սիրտը շատ դանդաղ էր գար-  
կում, նրա բոլոր անդամները փեռացան: Նա բացեց իր  
աչերը և հեռում երկու դարթ ու պատող փոքրիկ կրակ-  
ներ տեսաւ: Նա գլուխը բարձրացրեց, որ տւելի լաւ դի-  
տի նորանց և տեսաւ, որ նորանք գնալով իրան են մօտե-  
նում: Այլ կրակները փայլում լուսաւորում ու տյնպէս  
թրթում էին, կարծես թէ բոցեղէն աստղիկներ լինէին:  
Վերջապէս նորանք որսորդի առաջ կանգնեցին: Նորանցից  
մէկի ճիշտ մէջտեղից մի կնոջ գէսք էր երևում, փոս ըն-  
կած այտերով. որ փոփոացող սակեոյն մազերի միջից  
ծիծաղում էր: Միւս բոցի մէջ տեղում կարկաշուն բարակ  
հոտանքներ էին խաղում, որոնք բաժակի մէջ գինու նման  
պճպճում էին: Նւ երկուսն էլ պարում էին նրա առաջ:

— Դուք ո՞վ էք, — հարցրեց որսորդը, որ ինձ մօտ  
էք եկել իմ միայնակութեան ժամանակ և գիշերային խա-

ւարի մէջ:

— Մենք եկտրեակներ ենք, Զգայնութիւն և Հեսա-  
սիրութիւն, գոշեցին նորանք: Մեր հօր անունը Մարդ-  
կային մարմանն է, մեր մօր անունը-Անժուժկաւութիւն:  
Մենք նոյնչափ ծեր ենք, ինչպէս և առաջին մարդը: Բայց  
մենք չենք մեռնում:

Նրոնք ծիծաղեցին:

— Օ՛, — թո՛ղ քեզ գրկեմ, — գոշեց առաջինը, — իմ թե-  
ւերը շատ նուրբ և սաք են: Քո սիրտը սառել է, իսկ ես  
կտաքացնեմ: Օ՛հ, եկ ինձ մօտ:

— Ես քօ մէջ կլցնեմ իմ տաք կեանքը, — ասաց եր-  
կրորդը, — քո ուղեղը սեռել է, քո անդամները ըթացիկ  
են, բայց նրայն մէջ ուժեղ և ազատ կեանք կեռա, թո՛ղ  
քեզ կենդանացնեմ:

— Օ՛, հեռե՛ր մեզ, կանչում էին նորանք, և մեզ  
հետ ապրիր: Քեզանից աւելի ազնիւ հոգիներ եկել են  
այստեղ ու խաւարի մէջ սպասել, բայց նրանք յետո մեզ  
մօտ են եկել և մենք նրանց զիմաւորել ենք. այդ ժա-  
մանակից իվեր նրանք այլևս մեզ չեն թողել: Ամէն  
ինչ ուտ է, զգայարանքների բարէութիւն է, սնապաշ-  
տութեան հովիտը խեղկատակութիւն է. երկիրը փոշի  
է, իսկ ծառերը փամ: Իսկ մենք, շօշափել մեզ,  
մենք կենդանի ենք: Դու շեռ կարող կասկածել մեր գո-  
յութեան վրա: Զօշափել, տես ս՛րբան տարութիւն կայ  
մեր մէջ: Արի մեզ մօտ, գնանք մեզ հետ:

Նւ նորանք պտոյտ էին գալիս նրա գլխի վերևում և  
տւելի ու աւելի մօտենում էին նրան: Նրա ճակատից  
սառը կաթիլները թափում էին, պայծառ լոյսը նրա աչ-

բերն էր ծախում ու կուրացնում էր նրան, և նրա ստանած արիւնը էլի սկսեց հոսել նրա երակների մէջ: Աւհա ասաց:

— Խնշի համար ես մեռնեմ այս սոսկալի լեւաւրի մէջ: Սորանք իրանց տաքութիւնով կարող են իմ ստանած արիւնը տարացնել:

Բայց այս վարկեանին նրա առջևով սլացաւ այն հրաշալի հրեոյթը, որին նա այնչափ սիրում էր, նրա ձեռքերը թուլացան:

Բոցեղէն էակները շարունակում էին կանչել. — Եկ, եկ մեր յետեւից:

Բայց որսորդը քաշ քցեց իր գլուխը:

— Դուք ինձ կուրացնում էք, գոչեց նա, դուք տաքացնում էք իմ սիրտը, բայց չէք կարող ինձ տալ այն, ինչին ես պէտքան ծարաւի եմ: Աս այստեղ կմնամ և կսպասեմ մինչև մահ: Թողէք ինձ:

Աւհա իր երեսը ծածկեց ձեռքերով ու չէր ցանկանում այլևս նորանց լսել: Իսկ երբ նա վերստին իր աչքերը բացեց, էակները այլևս չկային և միայն երկու պծպծան կրակներ կամաց կամաց անհետանում էին տարածութեան մէջ:

Աւհա երկար, շատ երկար աւեց անվերջ գիշերը:

Մնապաշտութեան հովիտը բոլոր թողնողները անպատճառ պէտք է անցնեն այս իւտաւրի երկրով, բայց նրանցից ոմանք մի քանի օր են միայն մնում այնտեղ. ոմանք էլ ամիսներով ու տարիներով տանջւում են այնտեղ, իսկ շատերը մեռնում են այդ երկրում:

Որսորդը վերջապէս հորիզոնի ծայրում մի աղօտ

յոյս նկատեց. նա վեր կացաւ իր տեղից և ուղղեց գէպի լոյսը: Աւհա հասաւ լոյսին՝ նա մի փայլուն արեգակալին ցոլքի մէջ մտաւ: Աւհա առջևում երեացին մերձ փաստերի ու դատն իրականութեան վիթխարի լեռները: Նրանք լուսաւորեած էին արեգակի սպիտակ լոյսով, և միայն նրանց գագաթներն էին կորչում ամպերի մէջ: Որսորդը տեսաւ, որ լեռների հէնց ստորոտից բազմաթիւ շաւիղներ կան, որ բարձրանում էին նրա գագաթը ու նրա կրճից մի բարձր ցնծութեան ազդակ դուրս թուաւ: Նա այդ շաւիղներից ամենազուգուրթիւնները շտափագանցեւած էին: Հիմա այլևս ոչ այնքան բարձր էր և ոչ էլ այնքան զառիվայր: Մի քանի օրից, մի քանի շաբաթից, ամենաշատը մի քանի ամիս, նա գագաթին կը հասնի և ոչ թէ նա միայն մի փետուր կգտնի, ոչ, նա կ հաւարի այն բոլոր փետուրները, որոնց ուրիշները գլուխ են արդէն. նրանցից նա ցանց կշինի և գերի կը բռնի ձգահարսութեամբ. նա կը կրկնի նրան իր ձեռքերի մէջ, կը բռնի նրան, ամուր կը բռնի:

Նա ծիծաղում էր ուրախ ու պայծառ արեգակի տակին և բարձր ձայնով կը գում էր: Յաղթութիւնը բոլորովին մօտ էր:

Սակայն, փոքր ինչ յետո, շաւիղի զառիվայրը տւելի դժուարացաւ: Նրա շնչառութիւնը ծանրացաւ, նրա երգը մտրեց. նրա առջև ձախ կողմից ահագին մերկ ապառաժներ էին բարձրանում, նրանց վրա նայն խակ ոչ մա-

մուռ կար և ոչ քարաքոս, չորացած հողի ճեղքերից անյատակ անդունդներ էին երևում: Ահա շաւիղն էլ հագիւ է նշմարուում. հիմա միայն մի հետք է երևում. բայց վերջապէս, այդ հետքն էլ կորաւ. Որսորդը այլ ևս չէ երգում, նա իր համար ճանապարհ էր բաց անում, մինչև որ հասաւ ապառաժների այն վիթխարի պատին, որը հարթ ու սալաձև այնչափ բարձր էր երևում, որչափ որ մարդուս աչքը կարող էր կարել: Այս պատի վրա աստիճաններ կփորեմ և երբ նրա վրա բարձրանամ, ևս համարեա թէ նպատակիս հասած կլինիմ, — ասաց նա ինքն իրան քաջաբար, և սկսեց ուշառախ նա իր երևակայութեան մագուղը հանեց ու սկսեց նրանով աստիճաններ փորել: Բայց տեղ-տեղ քարերը փշրուում թափուում էին և կրքեմն մէ ամբողջ ամառն աշխատանքը անդունդն էր թափուում, որովհետև ցածի աստիճանները վատ քարից էին շինւած: Բայց որսորդը չէր դադարում աշխատելուց և ինքն իրան ասում էր. «Երբ մի անգամ այս պատի վրա բարձրանամ, ևս համարեա թէ նպատակիս հասած կլինիմ: Ամենամեծ աշխատանքս վերջացած կլինի:»

Վերջապէս, նա ամենաբարձր գագաթին հասաւ և նայեց իր շուրջը: Հեռու՛ ջրածրում սպիտակ մառախուղը սփռւած էր սնապաշտութեան հովիտի վրա, իսկ նրա գլխի վերքը ուրիշ նոր վիթխարի լեռներ էին կախւած: Այդ լեռները առաջ ցածր էին երևում. նրանք հիմի անասելի բարձրութեան էին հասնում: Գազաթից մինչև ստորոտը նրանք շրջապատւած էին ապառաժների կոյտերով, որոնք իրարու վրա թափւած էին վիթխարի բուրբակներով, և նրանց վերևում մշտենջնական արևն էր փայլում:

Եւ որսորդը մի վայրենի ու սոսկալի ճիշ արձակեց՝ նա դէպի գետինը կռացաւ և, կրք կրկին անգամ ուղղեց, նրա դէմքը մեռելի նման գունատւած էր: Նա շարունակեց իր ճանապարհը խոր լուսթեան մէջ: Նա այլևս որ մի ձայն չէր հանում: Հովիտներում ծնւածները համար շատ դժւար է լեռնային նոսր օդը շնչել. ամէն մի շունչ քաշելը նրան մեծ տանջանք էր պատճառում, և նրա մատների ծայրերին արևն երևաց:

Ժայռերի յետագա պատին հասնելով, նա դարձեալ սկսեց աշխատել: Այդ պատի բարձրութիւնը կարծես ծայր շունէր և նա ոչ մի լուսք չէր արտասանում: Օր ու գիշեր նրա գործիքի թխկթխկոցն էր լսուում, որով նա երկաթէ ապառաժների վրա սանդուխքներ էր փորում: Տարիներն անցնում էին տարիների յետևից և նա չէր դադարում աշխատելուց. բայց նրա առջևի պատը միշտ շարունակում էր բարձրանալ մինչև երկինքը: Երբեմն նա աղօթում էր, որ այդ մերկ ժայռերի վրա փաքը ինչ մամուռ երևա, զէթ այդ մամուռը իրան ընկեր կհամարէր, բայց նրա աղաչանքները իդուր էին անցնում. և տարիներն անցնում էին տարիների յետևից, նա այդ տարիները համարում էր իր փորած աստիճանների թւով, իւրաքանչիւր տարւան համար շատ քիչ թւով աստիճաններ էին ընկնում, բուրբակին քիչ թւով: Նա այլ ևս չէր երգում. նա այլ ևս չէր ասում՝ «այս կամ այն կանեմ». նա միմիայն աշխատում էր. իսկ գիշերները երբ աղջամուղջը ընկնում էր, քարայրներից ու ժայռերի բացւածքներից, նրա վրա այլանդակ ու վայրենի դէմքեր էին սկսում նայել:

Ա Ն Ո Ւ Ի Զ Ն Ե Ի



— Թող քո աշխատանքը, միայնակ մտորդ, խօսիր մեզ հետ, կանչում էին նորանք:

— Իմ փրկութիւնն աշխատանքի մէջ է. եթէ ես մի ըստէ կանգ առնեմ՝ դուք բոլորդ էլ ինձ վրա կնստէք, պատասխանեց նա. իսկ այլանդակ կերպարանքներ էլ աւելի էին ստորգում իրանց երկար վիզերը:

— Նայիր քո ստքի տակիրացւածներին, ասում էին նրանք, տես, ինչ է այնտեղ սպիտակին տալիս. Դրանք, ոսկորներ են: Նա էլ քեզ նման համարձակ և ուժեղ մարդ էր, որ ուզում էր այս ազատածները բարձրանալ: Բայց, երբ նա վերև նայեց, տեսաւ որ իր ձգտումները ապարդիւն են, որ նա երբէք չէ կարող հշմարտութիւնը բռնել, երբէք չէ կարող նրան տեսնել, երբէք չի դանիլ նրան: Այդ ժամանակ նա այստեղ պառկեց, որովհետև ընտրովին ուժասպառ էր եղել նա պառկեց, որ յաւիտեան ննջի: Նա ինքն իրան վրա բերեց: Քունը հանգստութիւն է. Քնած մարդը միայնակ չէ, նրա ձեռքերն էլ, սիրտն էլ ցաւ չեն դգում:

Որսորդը ծիծաղեց և ատամները իրար կցելով ասաց:

— Միթէ հիմա, երբ ես իս սրտից դուրս նետեցի այն բոլորը, ինչ ինձ համար ամենաթանկագին էր, խաւարի երէրում թափառելուց, հրապոյրները յղթելուց յետո, երբ աշխատեցի միայնակ այնտեղ, որտեղ երբէք մի մարդու ձայն չէր լուսած, միթէ հիմա ես կպառկեմ այստեղ նրա համար միայն, որ ձեր կիրակուրը դառնան, դուք, ժձի ծնունդներ:

Նա մի բարձր քրքիջ արձակեց, և վհատութեան ձայները շրացան, որովհետև քաջ և ուժեղ սրտի ծիծաղը

նրանց մահացու հարած է պատճառում:

Սակայն, քիչ յետո, նորանք դարձեալ դուրս սողացին ու սկոռեցին շուած աչքերով նրան նայել Գիտես, որ մազերդ արդէն սպիտակել են, — ասեցին նորանք, — որ քո ձեռքը երեւոյի ձեռքի նման դողում է: Նկատել ես արդե՞ք, որ մակաղիւղ ծայրը բլթացել է, նա բոլորովին ճարել է: Եթէ դու էլի մի ատտիճան վեր բարձրանաս, ասում էին նորանք, այդ քո ամենավերջին ատտիճանը կլինի: Դրանից վերև գու երբէք էլ չես բարձրանալ: Իսկ որսորդը պատասխանեց նորանց.

— Ես այդ գիտեմ, և էլի շարունակեց իր աշխատանքը:

Նրա ծերացած ու նիհար ձեռքերը շատ վատ ու ջղային կերպով էին տաշում քարը. նրա մտաները կծկել ու ոսկորացել էին: Այդ մարդի բոլոր ոյժն ու գեղեցկութիւնը անհետացել էր:

Սև վերջապէս ապառաժների պատի յետևից երևաց նրա ծերացած, ցամաքած ու կնճոռուած կրեսը: Նա տեսաւ, որ իր յանդիման լեռների նոր ու վիթխարի շղթաներ են բարձրանում ղէպի երկինք և կորչում են սպիտակ ամպերի մէջ. սակայն նրա կեանքի գործը արդէն կատարւած էր: Ծեր որսորդը ծալեց իր յոգնած ձեռքերը ու պառկեց այն անդունդի եզերքին, որի մօտ նա աշխատել էր իր ամբողջ կեանքը: Հիմա, վերջապէս, հասել էր նրա հանգստանալու ժամանակը: Ներբևում նրանից ցած՝ թանձր ու սպիտակ մառախուղը գալարում էր գաշտավայրի վրա, և երբ մի սեղից նա ճեղքեց, մեռնող որսորդի աչքերը նկատեցին այն դաշտերը, ծառերն ու մարգագետինները. սրտեղ նա իբ մանկութիւնն էր անցկա-

ցրել: Հեռուից նրա տկանջին էին հասնում իր վաղեմի թռչունների ձայները և պարտզ ամբոխի ազմակին ու երգերը: Եւ նրան թւած, թէ իր հին ընկերների ձայներն է լսում և հեռում, շատ հեռում իր հայրենական տունն է տեսնում, արեգակի լոյսով լուսուտրուած: Եւ արտասուքի խոշոր կաթիլներ երեացին օրտրդի աչքերում:

— Այնտեղ, ցածրում մեռնողները միայնակ չեն մեռնում, բայցակոնչեց նա:

Յեռո կրկին ամէն բան ծածկեց մտաւորուլի յետեւում, և օրտրդը շուտ եկաւ մրւս կողքի վրա: Ես փրնտում էի, ատոց նա, ես երկար տարիներ յամառութեամբ աշխատեցի, բայց չգտա նրան: Ես չէի հանդատանում, չէի արտնջում և էլի շահտա նրան: Հիմա իմ բոլոր օյժերը սղաւում են: Այստեղ, ուր ես կպտակեմ, բոլորովին ուժասպառ, կգան ուրիշները, երիտասարդներ և թարմ ոյժերով: Նրանք կգան իմ թողած հետքերով, վեր կբարձրանան իմ փորած աստիճաններով: Նրանք երբէք չեն իմտնուլ այն մարդու, անունը, որը չինել է աստիճանիկը: Նրանք կծիծաղեն իմ անճոռնի աշխատութեան վրա: Երբ քարերը վայր կթափեն, նրանք ինձ կանխեն: Բայց նրանք իմ սանդուխներով վեր կելլեն, իմ աշխատութեան շնորհով վեր կբարձրանան: Նրանք իմ օգնութեամբ կգտնեն նրան: Ոչ մի մարդ չէ ապրում իր համար և ոչ մի մարդ չէ մեռնում միմիայն իր համար:

Նրա ճլորած կոպերի տակից արտասուքը սկսեց հոսել առատութեամբ: Եթէ այդ ժամին նրա գլխի վերելում ճշմարտութիւն յայտնէր ամպերի մէջ, օրտրդը չը-

պիտի կարողանար տեսնել նրան, մահւան խաւարն արդէն պատել էր նրա աչքերը:

— Իմ հոգին լսում է նրանց ուրախալի ոտքի ձայները, ատոց նա, և նրանք կբարձրանան, նրանք կբարձրանան:

Նա իր թառամած ձեռքերը մօտեցրեց աչքերին: Եւ երկնքից մի ինչ օր բան ընկաւ ու կամաց կամաց սկսեց վայր իջնել խաղաղ ու անշարժ օդի մէջ: Այդ բանը անձայն կերպով վայր ընկաւ ու կակուղ պառկեց մեռնող մարդի կրծքի վրա: Որտրդը շօշափեց ձեռքով դա մի փետուր էր: Նա մեռաւ փետուրը իր ձեռքերի մէջ բռնած:

II

ԴՐԱԽՏԻ  
ՊԱՐՏԷՉՆԵՐԻ ՄԷՉ

Օրիորդը գնում էր դրախտի ծաղկալից պարտէգների միջով: Ծաղիկների հրաշալի անուշահոտութիւնը լցրել էր օդը, և օրիորդը մէկիկ մէկիկ քաղում էր այդ

ծաղիկներին:

Յանկարծ պարտաւորութիւնը իր գունատ ու խիստ դէմքով կանգնեց նորա առաջ և նայեց նրա վրա: Օրիորդը, դադարեց ծաղիկներ քաղելուց, բայց էլի շարունակում էր գնալ դրանց միջով, ժպտալով և ուրախանալով, իսկ նորա ձեռքերը լիքն էին ծաղիկներով:

Պարտաւորութիւնը կրկին անգամ նորան մօտեցաւ և նայեց նորա վրա, իսկ նա... նա շուռ եկաւ ու խոյս աւեց նրանից:

Երբ օրիորդը կրկին անգամ տեսաւ նրա սառը դունատ դէմքը, նա իր ձեռքից վայր ձգեց ամենազեղեցիկ ծաղիկները և լուռութեամբ հեռացաւ:

Բայց պարտաւորութիւնը կրկին անգամ նորան մօտեցաւ: Օրիորդը մի հառաչ հանեց, գլուխը կախ գէցեց, շուռ եկաւ և ուղղեց դէպի պարտիզի դուռը: Բայց երբ նա դուրս եկաւ ու յետ նայեց արեգակի ճաճանչների տակ նկատեց իր սիրած ծաղիկները, նա դառը կերպով լաց եղաւ:

Նա դուրս եկաւ և պարտիզի դռները ընդ միշտ փակեցին նորա յետքից, սակայն նորա ձեռքում դեռ մնացել էին այն ծաղիկներին ու կոկոններին, որ նա հաւաքել էր պարտիզում, և որոնք անապատի մէջ տարածում էին իրանց նուրբ անուշահոտութիւնը: Բայց Պարտաւորութիւնը շարունակ հետևում էր օրիորդին: Նա դարձեալ օրիորդի յանդիման դուրս եկաւ իր գունատ մեռելային դէմքով. և օրիորդը հասկանում էր, թէ ի՞նչու համար նա եկաւ: Նա բացեց իր երկու ձեռքերը և բաց թողեց իր բոլոր ծաղիկները, այն ծաղիկները, որոնց

ինքն այնքան սիրում էր, և նա հեռացաւ դարտակ ձեռքերով, շոր ու բորբոքած աչքերով:

Վերջապէս Պարտաւորութիւնը վերջին անգամն է մօտենում նորան: Նա ցոյց է տալիս նորան իր դարտակ ձեռքերը. ակթ էր սչինչ չէ մնացել: Բայց Պարտաւորութիւնը շարունակում է միշտ նորան նայել: Այդ ժամանակ նա վերջապէս բաց է անում իր կուծքի վրայի հարուստը այնտեղից մի փոքրիկ ծաղիկ է հանում, որը նա պահել էր իր կրծքի վրա: Այժմ նա այլևս ոչինչ չունի տալու... Եւ օրիորդը հեռացաւ, իսկ անապատի մոխրագոյն աւազը մերկաձև պտոյտ եկաւ նորա շուրջը:

Թարգ. Ռ. Խամազ.

III

ՎԱՅՐԻ ՄԵՂՈՒՆԵՐ

Մայրը նստած էր բաց պատուհանի առաջ, ցածրում ակացիանների տակ խաղացող մոռիկիկների ձայնը հասնում էր նրան, իսկ կէսօրւա ջերմ օդը խտութեամբ թափանցում էր սենեակը: Վայրի մեղուները ծաղկահիւթով դեղնած չաշերով երբեմն սենեակ էին մտնում, երբեմն

էլ դուրս թռչում, նստում էին ակացիաների թփերի վրա  
և անդադար բզզում էին:

Մայրը նստած էր ցած բազկաթուին սեղանի առաջ  
և ինչոր կարկատումէր: Առաջը դրած զամբիդից նա  
հանեց ձեռագործը, որը մասամբ տարածեց ծնկների  
վրա և կիսով չափ ծածկեց առջևի գիրքը: Նա կարում ու  
հետևում էր ասեղի պտոյաներին: Վերջապէս մեղունների  
միահնչին բզզոցը և մանուկների աղմուկը միախառնած  
նորա ականջում դժգոացին, իսկ ասեղի շարժումը հետզ-  
հետէ դանդաղեց: Մեղունները, այն երկայնաչաչ պիծա-  
կանման որձակները, որոնք մեղր շեն շինում, բարձր բզզ-  
ոցով աւելի ու աւելի էին նորա գլխին մօտենում:

Քնաթմիր նա ձեռքը դրեց սեղանի ծայրին, գուլ-  
պայի հետ, իսկ գլուխը հենեց ձեռքին: Քակի մանուկների  
ձայնը նորան թւում էր մերթ մօտ, մերթ հեռու և հեաղդ-  
հետէ միանման էր հասնում նորա ականջին, վերջը մայրը  
իսպառ էլ չէր լսում: Եւ նա զգաց միայն արգանդում  
պառկած իւր իններորդ երեխային:

Մեղունները շարունակ թռչկոտում էին նորա գլխի  
շուրջը, իսկ նա վրա ընկած, բնած էր և տեսնում էր  
մի կախարդական երազ:

Նորան թւում էր թէ մեղունները անվերջ երկարանում  
էին ու ձգւում, մինչև որ մարդանման դարձած շարունակ պը-  
տքուում էին նորա շուրջը: Դրանցից մին մօտեցաւ մօրը  
և ասաց, — Թո՛ղ ձեռս դնեմ այնտեղ, ուր պառկած է երե-  
խագ, եթէ ես ձեռովս նրան դիպչեմ, նա ինձ նման կը-  
դառնա:

Մայրը հարցրեց՝ — Դու ո՞վ ես.

— Ես «Առողջութիւնն», եմ պատասխանեց նա, ում որ  
դիպչեմ, նրա երակներում կհօսի զւարթ կարմիր  
արիւն, նա ոչ յոգնածութեան, ոչ էլ ցաւի կինթարկի,  
նրա ամար կեանքը ամբողջապէս դարձութիւն է առանց  
տիրութեան, ուրախ և յարատե խնդում է:

— Ոչ, ասաց երկրորդը, թողէք ես ձեռս դպցնեմ  
երեխայիդ, ես «Հարստութիւնն» եմ: Եթէ ես նրան դիպ-  
չեմ, նա կազատի ամէն տեսակ նիւթական հոգսերից.  
Եթէ ցանկա, նա կապրի եղբայրների ոյժով ու արիւնով,  
նա ձեռքը կբերէ ինչոր իր աչքերին հաճելի կթփի: Նա չի  
հասկանալ, թէ ի՞նչ բան է կարիքը:

Սա էլ լռեց, իսկ երեխան դարձեալ հանգիստ ու  
անշարժ պառկած էր:

Երրորդ արարածն էլ ասաց. — Թողէք ինձ դիպչել  
երեխային, ես «Փառքն» եմ: Ես բարձրացնում եմ մարդու բը-  
լուրի գլուխը, որտեղից ամէն մարդ կարող է նրան տես-  
նել. մեռնելիս նրան շեն մտանում, նրա անունը հնչում  
է դարեր, նրան սերունդէ-սերունդ, բերնէ-բերան աւան-  
դում են, Մտածիր միայն — դարեր դարեր շմոռացել:

Քնի մէջ մայրը շարունակ հանգիստ և ուղիղ շունչ  
էր բաշում, իսկ անըջական երեոյթները նորան շրջապա-  
տում էին ասէն կողմից:

— Թո՛ղ դիպչեմ երեխայիդ, ասաց դարձեալ նրան-  
ցից մէկը, ես «Մէլն» եմ, եթէ ես դիպչեմ երեխայիդ,  
նա մենակ չի անցնիլ իր կեանքի ուղին, անթափանց  
մթին օրերով: Երբ նա ձեռքը կարկառէ օգնութեան, նա  
ձեռի կպտտահի, որը կպաշտպանէ և կխրախուռէ նրան.  
Եւ եթէ ամէնն էլ նրա զէմ կանգնին, կգտնի մի հոգի,

որ կասէ նրան.—Ես քեզ հետ եմ:

Եւ Իրեխան ցնցւեց մօր արգանդում:

Քայց երևաց դարձեալ մի ուրիշն, որ ասաց.—Թո՛ղ ինձ դիպչելու, որովհետեւ ես «Ճաղանդն» եմ: Ես ընդունակ եմ ծրագրւածները գործարկելու: Ես վարձատրում եմ յաջողակ զինուորին, պետական գործիչին, փիլիսոփային, հեղինակին, չեմ թոյլ տալ երբէք ժամանակի պահանջից արնթանալ կամ եամնալ: Երեխադ երբէք արտոնջալու չէ իր անյաջողութիւնից, եթէ ես դիպչեմ:

Մեղուները թռչում էին մօր գլխի վրայից, գրեթէ դիպչում էին նորան իրենց երկար բարակ շաշկներով, երբ երազում սենեակի հեռուօր սթին անկիւնից առաջացաւ մի նոր ուրւական գունատ դէմքով, խոր կնճիռներով, փոսն ընկած այտերով, ժպիտը գողում էր նրա շրթունքներին: Նա պարզեց ձեռք մօրը, մայրը ետ քաշեց և ճշարով հարցրեց.—Դու ո՞վ ես, իսկ նա ոչինչ չպատասխանեց:

Մայրը զննեց նրա աչքերը և ասաց.—Դու ի՞նչ կարող ես տալ երեխայիս, առողջութիւն:

—Ո՛չ, ասաց նա, ում որ ես դիպչեմ, նրա երակներում մի անասելի ջահ է բռնկում և որպէս հուր լափում է նրա արիւր: Այդ կրակը միայն այն ժամանակ կարող է բժշկել, երբ կեանքը կբժշկւի:

—Դու հարստութիւն ես տալիս:

Նա գլուխը բացասաբար շարժեց:—Որին որ ես դիպչեմ, այն մարդը երբ կռանա գետնից ոսկի բարձրացնելու, յանկարծ մի երկնային բոց նրան ձգում է և մինչև որ նա իր դէմքը դէպի երկինք է դարձնում, ոսկին սլ-

բլում է նրա ձեռքից և որեէ անցորդի ձեռքն է ընկնում:

—Փառք ես տալիս:

—Ո՛չ, ես ում որ դիպչեմ, նրա համար աւազի վրա մատով մի անտեսանելի շաւիղ է խաղում: Ստէպ այդ շաւիղը գրեթէ բարձրանում է մինչև գագաթը և յանկարծ ծուում է դէպի ցած՝ ձորը. նա պիտի գնա այդ շաւիղով, թէպէտ ո՛չ որ նրանից աւել չի կարող նկատել այդ շաւիղը:

—Սէր ես տալիս:

—Նա կզգա սէրի խիստ ծարաւ, ասաց ուրւականը, բայց յագեցնալու չէ, և երբ նա գերկը կպարզէ սէրին և կցանկա սեղմել կըժքին... այդ ըսպէին հեռու հորիզօնի վրա լուսի ճառագայթ՝ նկատելով նա, կդիմէ դէպի այդ ճառագայթը: Որովհետեւ իր գանձը չի կարող հետը վերցնել, նա կսպառաւորւի մենակ ուղևորել: Կամ անզին էակը իր բոցավառ սրտին սեղմելիս, երբ նա կժոնչէ.—Ի՛մո ես, իմ սեփականիս, նա կլսէ մի ձայն,—Մերժիր նորան, նա քեզ չի պատկանում:

—Նա յաջողութիւն կունեննա:

—Անյաջողութեան մէջ կմնա, ասաց ուրւականը: Օտարները հետ որեէ նպատակի ձգտելիս, նրանք սրանից տարները հետ որեէ կհասնին, որովհետեւ սրան արտակարգ ձայնելի շուտ կհասնին, սրտը կհրապուրէ, ուստի ստիներ կկանչեն և սքանչելի լոյսը կհրապուրէ, ուստի ստիպւած կլինի՝ լսել ու սպասել: Քայց ասան թէ ինչ է ստե՛նագարմանալին. հեռու-հեռու այրող առազների ետևը, այնտեղ, ուր միւսները բացի անապատային տաքածութիւնը ուրիշ ոչինչ չեն տեսնում, նա կտեսնի մի կապոյտ ծով: Այդ ծովի երեսին արևը միշտ փայլում է, դրա ջը-

րերը պարզ երկնքի նման կապոյտ են, իսկ ափերը ծը-  
փում են սպիտակ փրփուրով: Այդ ծովի մէջ մի ընդար-  
ձակ երկիր է ձգւում և դրա սարերի գագաթին շոշոդուն  
ասկին կտեսնի գաւակը:

— Իսկ որդիս այդ աշխարհը հասնելու է, հարցրեց  
մայրը:

Ուրականը տարօրինակ կերպով ժպտաց:

— Այդ աշխարհը արդեօք իրականութեան մէջը կ'ս,  
հարցրեց մայրը:

— Ի՞նչ կա իրականութեան մէջ, նա կրկնեց:


Սև մայրը դիտեց ուրականի կիսաբոց աչքերը ու  
ասաց:— Դպիր երեխայիս: Ուրականը հնազանդեց, դը-  
րեց ձեռը քնած մօր վրա և սուսիկ ինչոր փսփսաց: Մայ-  
րը միայն կարողացաւ այս խօսքերը լսել:

«Հատուցումդ այն կլինի որ իզէալդ (կատա-  
րելութեան գաղափարը) կիրականանա:

Սև երեխան ցնցւեց մօր արգանդում: Մօր խոր քու-  
նը դեռ շարունակւում էր, իսկ երեկոթները անհետացել  
էին:

Սև նորա գոյութեան խորքում դեռ չծնած երեխան  
մի երազ տեսաւ: Նրա երբէք դեռ ցերեկաւ լոյսը չտեսած  
աչքերում, դեռ տհաս ուղեղում շողաց լոյսի զգացումը,  
այն լոյսի, որ նա բնաւ չէր տեսած, գուցէ և երբէք էլ  
տեսնելու չէր, բայց որը կա որեւէ մի տեղի:

Երեխան սաացաւ իր նէրը՝ Գաղափարականը—  
Իդէալը նրա համար իրականացաւ:



# ՄԻՄՕԶԱ ԾԱՌԻ ՏԱԿ

(ԵՐԵՎԱՆ—ԵՐԱԶ)

Ժամանակով ևս ճանսպարհորդում էի արևի կիզիչ  
ճառագայթների տակ Ափրիկէի գաշտավայրերում: Սա ձիս  
միմօզա ծառի տակ հովանաւորեցի, վերցրի թամբը և  
թողի շարացած թփի մօտ: Հեռու շուրջս տարածւում էր  
գորշագոյն այրած գետինը, Սա էլ նստա ծառի շարքում,  
որովհետև անտանելի շոգ էր: Խոր քունը շտապեց ինձ  
յաղթել, զլուխս զրի թամբին, բնեցաւ և մի տարօրինակ  
երազ տեսաւ:

Ինձ թուում էր, թէ ևս կանգնել էին անապատի  
ծայրին և ամէն կողմից բամին անապատում աւազ էր  
կուտակում: Երկու ուղտանման ահագին մարմին տեսաւ,  
մէկը աւաղի վրա պառկած էր, իսկ միւսը դրա կողքին  
կանգնած: Հետաքրքրութեամբ սկսեցի դիտել աւաղի վրա  
պառկած մարմնին, քանի որ նորա մէջքին մի ահուկի բեռ  
նկատեցի և աւաղի մի այնպիսի շերտ, որը կարծես կու-

տաւելի էր վրավրա դարերի ընթացքում:

Սա էլ նայում ու գործանում էի: Ինձ մօտ լուս կանգնած էր մէկը. ես գրանից հարցրի. — Ո՞վ է աւագի վրա ընկած այդ անաղին էակը:

— Դա կինն է, պատասխանեց, նա է, որ իր մարմնում կրում է մարդին:

— Ի՞նչի է նա այտտեղ պառկել բոլորովին անշարժ ու աւագի մէջ խրած:

— Լսիր պատմում: Անցել են անվերջ դարեր, ինչ նա պառկած է այտտեղ և քամին սահում է նորա վրայից: Արևը, գարամեալը երբէք չեն տեսել նորա շարժումը, ամենահին գիրքն էլ պատմում է, թէ այս էակը այն դարերում էլ այնպէս է պառկած հղել, ինչպէս այժմ բոլորովին աւագով ծածկւած է: Բայց լսիր, ամենահին գրքերից աւելի վաղ, ամենամտերի յիշողութիւնից աւելի հնուցւա են նորա ոտքերի հետքերը, որ գանւել են մարդկային լեզուի կրճեցում, նախորդների սովորութիւնների ապառաժեա փշրանքների վրա: Այնտեղ դու կգտնես միևնոյն շարքին նորա քայլերի հետքերը նորա մօտ կանգնած էակի ոտքերի հետքերի հետ: Լսիր, այժմ այդ հողի մէջ պառկածը, ժամանակին ազատ էր, և այդ էակի հետ ձեռ ձեռի աւած թափառում էր լեռներն ու ձորերը:

— Դա հիմա ի՞նչի է պառկած, հարցրի:

— Սրանից շատ դարեր առաջ, ստաց նա, «Մկանունը պին» — Ոյժի» շրջանը նորան հասաւ, երբ նա կռացած երեխայի վրա նրան կերակրում էր, մօտը կանգնած էակը ծանրաբեռնեց կնոջ լայն թիկունք շոնարհութեան» շալակով և անողորմ «հարիքի» ամուր կապերով այդ շալակը

կապկպեց: Երբ կ'ընդ գննեց երկինքն ու երկիրը, Լմբանեց, որ նորա համար յայդ կորած է. և էլ գրանից ազատելիք չունի ծանր բեռին տակ կռացաւ և այն օրւանից նա այտտեղ պառկած է: Դարեր դարերի հետքից շրջում են, բայց «հարիքի» անգուլթ կապերը չեն թուլանում:

Սա նայեցի նորա աչքերն և զբանց մէջ տեսա գարեւոր սոսկալի համբերատարութիւնը: Նորա տակի հողը արտասունքներեց բոլորովին թրչւել էր, իսկ պնններեց արտաշնչելու աւագը ցրում էր:

— Արդե՞՞ք նա փորձել է շարժել, հարցրի:

— Երբեմն երբեմն նորա անդամներից մէկը կամ միւսը շաժուում է, գիտէ, որ չի յաջողել նորան ստքի կանգնել, քանի որ ծանրութիւնը նորա վրա է դրած:

— Ի՞նչի մօտը կանգնած մարդը, հարցրի, նորան չի թողնում և չի հեռանում:

— Նա էլ չի կարող նայիր... Տես նրանց կապող մի լայն պարան, որ այդ երկու մարմինների մէջ ձգւած է գետնի վրա: Քանի որ կինը պառկած է. մարդը պիտի մօտը կանգնի և զննէ անապատի շուրջը:

— Մարդը գիտէ, հարցրի, թէ ի՞նչի նա չի կարող շարժել:

— Ոչ, պատասխանեց:

Սա ես լսեցի մի ինչոր ճագոց, ետ նայեցի, տեսա որ կնոջ շալակի ծանր բեռը կապող պարանները կտրւեցան և բեռը ցած ընկաւ:

— Այդ ի՞նչ է նշանակում, հարցրի,

— Մեռաւ «Մկանունը պին» — Ոյժի» դարը, պատասխա-

նեց, նրան դանակով սպանեց «Նեադրային» գօրծթեան  
 դարը: Վերջինս անլսելի և աներևութարար մօտեցաւ կը-  
 նոջը և իր մեքենայան զիւտերի դանակով կտրեց նորա  
 շալակին կապած բռնի պարանը: Անգուց Վարիքը կու-  
 տրեց: Այժմ կինը կարող է սօք կշնել:

էլի տեսա, թէ ինչպէս կինը դու շարունակ ան-  
 շարժ պառկած էր աւազի վրա, բայց աչքերը լայն բայ  
 արած, վիզն երկնցրել էր: Քուտ էր թէ նա մի բան էր  
 փնտում անապատի այննահեռաւոր ծայրում, բայց մոյզ  
 բանը չէր երևում: Ուզեցի իմանալ՝ քնած է թէ արթուն:  
 Դիտեցի նորան և նկատեցի, որ նորա մարմինը ցնցեց  
 աչքերը փայլեցին ճիշդ այնպէս, ինչպէս մութ սենեակը  
 յանկարծ լուսաւորում է արևի ճառագայթի մուտքից:

— Այո ինչ է, հարցրի,

— Մ... շնջաց' նա միտք է յղացել— թէ չի կա-  
 րող արդեօք բարձրանալ:

Նայում էի նա բարձրացրեց գլուխը և տեսաւ ա-  
 ռաջին այն փոքր, որի մէջ այնքան ժամանակ խըր-  
 ւած էր նորա գլուխը: Կինը նախ երկնքին աչեց, յետո՛ գե-  
 տին, վերջն էլ մօտը կանգնած մարդուն: Բայց վերջինի  
 հայեացքը ձգւած էր անապատի խորքերը: Նորից տեսա,  
 թէ ինչպէս մի սառսուր սլացաւ նորա ամբողջ մարմնով  
 և նա ծնկներով այնպէս հենեց գետնին, որ ես բացա-  
 կանչեցի: — Ահա այս բոպէիս նա ոտքի կկանգնի:

Բայց միայն նորա կողերն էին բարձրանում, իսկ  
 նա շարունակում է իւր նախկին պառկած դիրքը, սիայն-  
 թէ գլուխը բարձր էր բռնել, էլ չէր ցածրացնում:

Մօտս կանգնողն ասաց. — Նա անշափ թոյլ է, նայիր

երկար պառկելուց նորա ոտքերն էլ չեն կարող շարժել:

Ես նկատեցի, թէ ինչպէս այդ էակը ճիգ էր գործ  
 դնում և թէ ինչպէս նորա մարմնի վրա երեցել էին քըր-  
 ախնքի կաթ ինները:

— Իհարկէ, ասի, նորա մօտ կանգնած մարդը օգ-  
 նութեան կհասնի: Բայց մօտս կանգնողն ասաց. — Նա  
 չի կարող օգնել կնոջը, կինն ինքը պէտք է իրան օգնի:  
 Թո՛ղ նա տքնի մինչև ուժեղանալը:

— Գոնէ մարդը նորան չի խանգարելու, գոչեցի:

— Տես, նա հեռանում է, նա պարանը քաշում է,  
 որ գետին գցէ կնոջը: Նա շարունակեց. — Մարդ չէ հաս-  
 կանում թէ ինչ է անում, երբ որ կինը շարժում է պա-  
 րանը ձգում է և մարդուն անհանգստացնում, այնպէս որ  
 վերջինս ախամա նորանից հեռանում է: Կգա մի օր,  
 երբ նա կհասկանա և կըմբռնէ թէ կինն ինչ է անում,  
 թո՛ղ կինը միայն կանգնի ծնկները վրա, այդ օրը մարդը  
 նորան կմօտենա և համակրանքով կնայէ աչքերին:

Նա վիզն երկնցուց, քրտնքի կաթ ինները նորա ճա-  
 կաթից գլուխեցան աւազի վրա, նա մի մատնաշափ բար-  
 ձրացաւ և կրկին վայր ընկաւ: Ես բացականչեցի:

— Ա՛հ, նա անշափ թոյլ է, նա չի կարող ման գալ,  
 երկար ու ձիգ տարիները սպառել են նորա ոյժը, նա  
 երբէք չէ շարժելու:

Քովս կանգնողն ասաց. — Նայիր, որպիսի լոյս է երե-  
 ւում նորա աչքերում:

Եւ հագու հազ այլ էակը շարժեց, վերջապէս  
 չորքից, բայց ես զարթեցաւ:

Չուրջս տարածւում էր հեռուն չորացած թփերով

մերկ գետինը, կարմիր աւազի վրա մըջիւնները յետ ու առաջ էին սողում, անտանելի շոգն էր պատած: Նայեցի երկիւքին, ձգւեցի և սկսա մտածել տեսած երազիս մասին. Գէսօրւա կիզիչ տօթի ազդեցութեան տակ հս կրկին գլուխըս թէքեցի թամբի վրա, քնեցի և մի ուրիշ երազ տեսա:

Անապատում մի կին երևաց, նա հեռւից մօտենում և ուղղւում էր դէպի մի մութ գետի ափ: Այդ ափը խըճըճւած էր ու բարձր և այդ ափին նա հանդիպեց երկայն ու սպիտակամօրուս ծերունու: Սա ձեռին մի մահակ ունէր, որի վրա գրւած էր «Խելօքութիւն»: Ծերունին հարցեց կնոջը, թէ ի՞նչի էր եկել. նա պատասխանեց. — Ես կին եմ և ազատութեան աշխարհն եմ փնտռում:

- Առաջդ է:
- Առաջս բան չեմ տեսնում, բացի հոսող մութ գետը, որի ափը բարձր է և սրակտղ, իսկ ծանր աւազը անվերջ թափւում է:
- Իսկ աւելի՞ հեռու.
- Բան չեմ տեսնում, միայն երբեմն, երբ աչքերս հովանաւորում եմ, էնդիի հեռաւոր ափի վրա կարծես ծառեր եմ նշմարում, բլուրներ և նրանց վրա փայլուն արև:
- Ազատութեան աշխարհն այդ է:
- Ի՞նչպէս կարող եմ այնտեղ հասնել:
- Դէպի այդ աշխարհը միմիայն մի ճանապարհ կա, դիպի ցած ուղղահայեաց նեղ կածան է, աշխատութեան քարերով, պատած է և տանջանքի ջրերով ողողւած: Ուրիշ ելք չունի:
- Իսկ այնտեղ կամուրջ չկա:
- Ո՛չ:

- Ջուրը խո՞ր է.
- Խորո՞ւնկ:
- Իսկ յատուկ հարթ է.
- Հանրթ, ոտդ հինգ անգամ կպստէ և գուցէ կոչնչանաս:
- Որևէ մէկը այն կողմն անցել է.
- Մի քանիսները փորձել են:
- Կո՞ արդեօք որևէ դիրք, որտեղից աւելի յարմար հնարաւոր լինի գետն անցնել:
- Այդպէսի հետք մարդ չի թողել:
- Կինը ձեռքերով հովանաւորեց աչքերը և ասաց.
- Գնալու եմ.
- Բայց ծերունին նորան կանգնեցրեց և ասաց. — Ուրեմն դու պիտի թողնես անապատում հագածդ շորերը, որովհետև ջրում այդ շորերը քեզ խոր կքաշեն:
- Եւ կինը ուրախութեամբ յետ գցեց պապերի կարծիքներով արմատացած և բողբոլի մաշած ու ծակծղկած վերարկուն, բացեց դօտին, որով նա այնքան երկար ժամանակ զարգարել էր. ծերունին շարունակեց. — Դէն գցիլը ստորադրութեան քօշերը ոտքերիցդ. եւ կինը կանգնեց համարեա մերկ, միայն մի թեթև սպիտակ շղարջ էր ծածկում նորա իրանը:
- Այդ շղարջը կարող ես վրադ պահել, ազատութեան աշխարհում բոլորն էլ այդպէս են շրջում: Դա ջրի մէջ չի ծանրանում. միշտ ջրի երեսից բարձր է մնում:
- Տեսա, որ այդ շղարջի վրա կուրծքի դիմաց, զբրւած էր. «Ճշմարտութիւն»: Դա սպիտակ էր, արևը երբէք այդ չէր լուսաւորում, վրայի լաթերը այդ ծածկել էին:

Ծերունին ասաց կնոջը.—Վերցրո՛ւ այդ մահակը, պինդ պահիր, այն օրը, երբ այդ դուրս կգա ձեռիցդ, դու կկորչես: Առաջդ պահիր, և դրանով շօշափիր ուղիդ, որ տեղ ճիպատդ յատակին չհասնի, ոտդ չղնես:

Եւ կինն ասաց.—Ես պարտաւոր եմ ճանապարհելու:

Բայց ծերունիը նորան կանգնեցրեց.—Ո՛չ սպասիր, ինչ կա կրճքիդ վրա: Նա լուռ էր:

—Բնց արա, թող տեսնեմ:

Երբ կինը կուրծքը բացեց, ես տեղա նորա կրճքին հպած մի փոքրիկ արբարած, նորան սեղմւած. Ոսկեթէլ մազերը թնձկւած էին նրա գլխի վրա, ծնկաշոր փարւած էր կնոջը, իսկ մանրիկ թաթիկները պինդ բռնել էին կնոջ կուրծքը: Խելօքութիւնը հարցրեց.

—Դա ո՞վ է, այդտեղ ինչ է շինում:

—Նայիր նրա թեւերին, պատասխանեց կինը:

—Դրան կրճքիցդ հեռացրու:

—Նա բնած է և ծիծ է ուտում. դեռ երեխա է:

Չմտ վաղուց ես նրան փայփայել էմ: Ազատութեան աշխարհում նա մարդ կդառնա: Այնտեղ սինք ձեռ ձեռի տրւած միասին ման կգանք և նա իւր սպիտակ թեւերով ինձ կպաշտպանէ. Անապատում նա միայն մի խօսք. «Կիրք» էր փսփսում ուկանջիս, ես երազում էի, թէ ազատութեան աշխարհում գուցէ սովորի «Ընկերութիւն» խօսքն արտասանել:

—Դրան վար դիր: }

—Ահա այսպէս ես նրան մի ձեռքովս կտանեմ, իսկ միս ձեռովս ջուրը կճեղքեմ:

—Դրան դիր գետին: Երբ ջուրը մտնես, դրա մասին կմտածես, կմոռանաս, թէ կուելու ես, գետին դիր, դա չի մեռնիլ: Երբ դա զգա, թէ դու դրան մենակ ես թողել, նա թեւերը բաց կանէ և կսաւառնի, նա քեզից շուտ կհասնի ազատութեան աշխարհը: Չգիտես, որ այն ամից դրանց օգնութեան ձեռ կառկարողը սէջի աջն է: Այն ժամանակ դա տղամարդ կլինի, ո՛չ թէ երեխա: Կրճքիդ տակ դա չի կարող դարգանալ, ցած դիր, որ կարողանա մեծանալ:

Եւ կինը նրան կրճքից հեռացրեց, նա կնոջն այնպէս կծեց, որ արիւնը գետին հոսեց: Կինը ցած դրեց և վէրքը ծածկեց: Վերջը կուացաւ և նրան փայփայեց: Ես նշմարեցի: Թէ ինչպէս կնոջ ճակատի մազերը ձիւնի պէս ճերմկեցան և նա պառուսեց: Նա կանգնած ուղիղ ջրի ափին բացականչեց:

—Ի՞նչի գնամ ես այդ հեռու աշխարհը, ուր ոչ ոք երբէք չէ հասել: Օ՛հ, ի՛նչպէս մէնակ եմ, անսահման մենակ:

—Ս՛ո՛ւ... լսում ես օրիէ ձայն, «Բանականութիւն» ծերունիը ասաց կնոջը:

Կինը ուշադրութեամբ լարեց լսողութիւնը և ասաց.

—Այո, ես լսում եմ հազարաւոր, բիւրաւոր ոտքերի ձայն, նորանք ճանապարհ ընկան:

—Այդ քեզ հետևողները աղմուկն է, առաջ դնա, հետք բաց գէպի ջրի այն ափը, այնտեղն՝ ուր դու կանգնած ես, ճանապարհը կհարթի հազար ու բիւրերի ոտքերի տակ: Քիչ յետո շարունակեց ծերունիը:

—Տեսել ես արդեօք ի՛նչպէս մորեկը անցնում է

հեղեղատը, առաջ մէկը ջուրն է մտնում և ջրի հոսանքը նրան քշում է, նրա ետևից կրկրորդն է մտնում. յետո երրորդը, չորրորդը կայն. և վերջապէս կուտակած մարմինների զանգւածից կազմում է կամուրջը, որի վրայից անցնում են հեռնորդները:

— Ի՞նչ առաջընթացները, որոնց տանում է ջրի հոսանքը, որոնք անյայտ ընդմիշտ կորչում են, դրանց մարմինները մինչև անգամ իբրև կամուրջ չեն ծառայում ուրիշներին անցնելու:

— Հոսանքը տանում է և անյայտ կորչում են, ... բայց դրանից ինչ է հետևում:

— Ինչ է հետևում, հարցրեց կինը:

— Նրանք հետք են պատրաստում դէպի ջրի այն ափը:

— Կեք են պատրաստում դէպի ջրի այն ափը, ... կրկնեց կինը, իսկ մեր մարմիններից պատրաստւած կամուրջով ո՞վ է անցնելու:

— Ամբողջ մարդկային սերունդը

և և կին վերցրեց մահակը առաջ բայլեց:

Տեսա, թէ ինչպէս նա գառիվայր ափով մութ գետ մտաւ, ու արթնցա:

Չուրջս ամէն կողմ պատած էր մայր մտնող արևի դեղին լոյսը, իսկ սպիտակագոյն թւիերի ճիւղերը մատանման ցցւած շողշողում էին այդ լոյսից: Չիս հանդարտ մօտս արածում էր. շուռ եկա կողքիս և սկսեցի զխակ մրջիւններին, որոնք բիւրեքով շրջում էին կարմիր աւազի վրա: Մտածեցի, թէ արդէն ճանապարհ ընկնելու ժամանակն է, հովն սկսել էր: Բայց խոր թմիրը էլի կաշկան-

դեց անդամներս, գլուխս ծանրացաւ և ես կրկին բնեցի: Եւ նորից երազ տեսա:

Ինձ, թուում էր, թէ մի աշխարհ էի տեսնում, նրա բլուրներով ձեռ ձեռի տւած շրջում էին աղբ ու բաղտաւոր կիներ և մարդիկ: Նրանք իրար աչքեր, նայում էին, որտեղ չէր նկատում երկիւղ: Տեսա, որ կիները նոյնպէս իրար ձեռ էին բռներ: Ես քովս կանգնողից հարցրի թէ—այդ ի՞նչ աշխարհ է:

— Սա «Աղատու թեան—աշխարհն» է, պատասխանեց: Ես հարցրի:

— Ո՞ր է, որտեղ է: Նա պատասխանեց:

— Նրկրի վրա:

— Այդտեղ մարդիկ երբ են հասնելու, հարցրի:

— Ապագային, պատասխանեց:

Եւ երբ ես զարթեցա, տեսա շուրջս ամէն բան վերջալոյսով լուսաւորւած: Ցած բլուրների գլխին կանգնել էր մայր մտնող արևը, մրջիւնները դանդաղ տունն էին քաշում, սքանչելի դովը տարածւել էր օդի մէջ: Արևը մայր մտաւ հեռաւոր բլուրների ետևը, բայց ես իմանում էի, որ առաւօտ կրկին ծագելու էր:



# ԿԵԱՆՔԻ ԲԱՇԽՈՅՔԸ

Կնոջը քնած տեսա: նա երազում էր, իբր թէ կեանքը նորա առաջ կանգնած էր ամէն մի ձեռքին մի մի քաշիս բռնած՝ մէկի մէջ սեռ միտում Ազատութիւն:


Եւ կեանքը ասաց կնոջը.— Ընտրիր:

Կինը երկար ժամանակ մտորում էր թէ՛ որն ընտրել, և վերջապէս նա ասաց.— Ազատութիւն:

Եւ կեանքը նորան ասաց.— Ի՞նչ լինի ընտրեցիր, եթէ սէրն անանէիր, ես քո խնդրածը կտայի ու կհեռանայի քեզանից, երբէք էլ չէի վերադառնալ: Իսկ այժմ կգա մի օր, երբ ես դարձեալ պիտի վերադառնամ քեզ մօտ: Այդ օրը դու կգտնես երէւ Բաշխն էլ միասին մի ձեռքիս:

Ես լսեցի, թէ ինչպէս կինը քնի մէջ հրճանքով խնդաց:

Քարգ. Տ.—Տ,



# ԱՏՐՊԵՏԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

1. Պատկերներ Տասը պատկեր թուրքահայերի կեանքից, 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.
2. Վիլհելալայի-Գաղսնիքի Վէպ թուրքիայի 1876-7 թ. արկածներից 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.
3. Վիլպակներ Ա. Հարազատներ և Բ. Աննկուն, վիպակներ դարավերջին արկածներից 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.
4. Ալմաստ Վէպ Բարձր-Հայոց կեանքից, առաջին Հատոր (Երկրորդ տպագրութիւն) 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.
5. Ալմաստ երկրորդ Հատոր (Երկրորդ տպագրութիւն) 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.
6. Ջառանիր Վէպ վերջին Ռուս Թրքական 1877-8 թ. պատերազմի արկածներից 1904 թ. գինն է—5 դր. կամ 1 ըր.

Դիմել՝

Tauris Atrpet

Պ ի ն ն է

15 Կոպ. կամ 15 շահի

«Ազգային գրադարան»



NL0168836

